Այս հարստահարութիւնների հետևանքը լինում է այն, որ գիւղացիութիւնը ենթարկւում է սովի, և նրանք նորից գաղթում են Նոր—Ջուղա։

Ահա, թէ այդ առթիւ ինչ էի գրել՝ «Արև»-ի 1917 տ. № 56-ի համարում.

Այսօր Տաճկահայ կեանքի հետ քայլել է նաև մի տխուր և սրտամղիկ պատկեր և Պարսկաստանի աշխատաւոր հայ գիւղացիութեան առաջ, այն գիւղացիութեան, որ Պարսկաստանի բարեկեցութեան հիմքն է կազմում և որի կորուստը մահացու հարուած պիտի պատճառի Պարսկաստանի տնտեսական կեանքին։

Ներկայումս Փէրիա գաւառի Միլակերտ գիւղի հայ ազգաբնակութեան դրութիւնը միանգամայն ողբերգական է։ Հայ գիւղացին ձգնաժամային օրեր է ապրում և սովը պատել է արդէն ամբողջ գիւղը։ Շատերը քաղցից մեռնում են, գիւղն օրէց-օր դատարկւում է։ Նորից գաղթում է Միլակերտի խեղճ հայ գիւղացիութիւնը, բայց այս անգամ ոչ թէ սրից, սրտաութիւնից, այլ գիւղի ամենակատարի թշնամի—սովից։ Եւ արդէն գաղթականութեան ը. կարաւանը հասել է Նոր—Ջուղա, Ս. Ամենափրկչեան վանքը։

Եւ գալիս են նրանք, գալիս շարան-շարան, իրար յետևից, խումբ-խումբ, ուժասպառ, յոգնած, գլուխները կախ, մերկ ու սոված և այսպէս պատմում իրենց վիշտն ու ցաւը.

«Ախպրակը, անօրէն լուսերն աւերեցին մեր սիրելի գիւղը, այրեցին մեր սուրբ եկեղեցին, տարան մեր սուրբ խաչն ու աւետարանը։ Աւերակների վերածեցին մեր պապերի այնքան դառն քրտինքով կանգնեցրած շէնքերն ու օջախները, հանդերն ու արօտները։ Եւ այժմ մնացել ենք անտուն, անտիրական։ Տուն չունենք, օջախ չունենք, մաճ չունենք, մաճկալ չունենք, եկեղեցի չունենք։ Դուշմանը զարկեց, տարաւ, տարաւ բոլորն էլ, մեր մայն ու ապրանքը, մեր տուն ու տեղը։ Ախպրակը, մեր երեխէքը գիւղում չեն ապրում, այլ սովից ջարդւում են, նրանք քաղցած են ախպրակը, մեղ ենք, վարձ է, մի ճար, դարման արէք...»։

Այսպէս են երգում նրանք իրենց վիշտն ու ցաւը։

Մենք պէտք է կատարենք մեր պարտքը վշտի, արցունքի, ցաւի, կարօտութեան, հառաչանքի առաջ։ Հետևենք մեր խղճի ձայնին և օգնութեան համենք այն գիւղացիութեան, որ մի ժողովրդի առողջ և կենսունակ տարրն է։ Նրանք են մեր ապագութեան արմատը։

Այսօր Միլակերտ գիւղի գոյութեան խնդիրն է դրուած հրապարակի վրայ։ Գիւղը ոչնչանում է, գիւղացիութիւնը կորչում է։ Այժմ ինչ պէտք է լինի մեր պարտականութիւնը։ Գիւղացիները ցանքս չունեն, գութան չունեն։ Նրանք աշխատել են ուզում։ Ահա նրանց պահանջը, տանք նրանց սերմացու, գութան, մաճ։ Տանք այս բոլորը, որովհետև նրանք ուզում են նորից գիւղ վերադառնալ և աւերակների տակից ստեղծել հայ կեանքը։

Ղարիպ-Արամ

Գահավիժօրէն միմեանց յաջորդող այս տխուր դէպքերի վրայ աւելացնենք այն, որ այս տարի գիւղացիութիւնը մնա-